

պէտք է տօնել ու պատուել այդ հայ մեծ գրագէտին քիչատակն ու գործը, ու ընտրեց՝ ներկայ ժողովներէն ինչպէս եւ բացակայ անձնաւորութիւններէ՝ կազմակերպել մասնախումբ մը, բաղկացած մօտ երեսուն անձէ, որպէս զի ան սարքէ Փարիզի մէջ, այս դարնան վերջը կամ յառաջիկայ աշնան, մեծ հանդէս մը ի պատիւ Բաֆֆի, կոչ ուղղէ Ֆրանսայի եւ այլ օտար երկիրներու հայ գաղութներուն որ նմանօրինակ հանդէսներ սարքեն, եւ ջանայ նաեւ հրատարակել հատոր մը որ Բաֆֆիի նուիրուած յօդուածներու հաւաքածու մը պարունակէ:

Բաֆֆի հայ ազգի մեծագոյն գրագէտներէն մին եղաւ: Հայաշունչ ու մանկիկ հայ վկայը, զոր Խաչատուր Աբովեան հիմնեց, եւ զոր Մերենց սկսած էր արդէն ծաղկեցնել իր պատմական ուղեւորիչ վկայերով, Բաֆֆի հասցուց իր գերազոյն բարձրութեան եւ դարձաւ մեր «ազգային վիպասանը», «վիպասան» բառին թէ՛

հին իմաստով (ղիւցաղներդակ) եւ թէ՛ նոր նըշանակութեամբ, (Ուօլթըր Սքօթի, Հիւկոյի, Էօթէն Սիւի ոչ ուով ու զնացքով՝ կեանքի պատկերահան եւ վկայի միջոցով որոշ գաղափարներու թերազրիչ ու տարածիչ): Ան իր որոշ շարք մը վկայերով ամենախոր ազդեցութիւն գործեց հայ ժողովուրդի հոգեբանութեան՝ ու նոյն իսկ հակառակորդին՝ վրայ՝ ատկից զատ՝ ան մարդկային ինքնազրոյժ տիպարներ ստեղծող, կովկասեան, արեւելեան (ու մանաւանդ պարսկական) կեանքը տաղանդաւոր կերպով պատկերացնող համեզ վիպողի ընդարձակ զործ մը արտադրեց: Բովանդակ հայ ժողովուրդը պէտք է անշուշտ միանայ տօնախմբելու համար այդ հօր մատենագիրը որ եղաւ մին մեր ազգային մշակոյթի մեծ հնոցներէն եւ կը մնայ միշտ վառ իրր անոր անշէջ ջահերէն մին:

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ

«ՎԻԿՏՈՐ ՀԻԿՈ ՄՈՒՍԷՆ»Ի ՎԵՐԱՏԵՍՈՒԶ ՓՕԼ ՍՈՒՇՈՆԻ ՆԱԽԱՅԸ

VICTOR HUGO, CHATEAUBRIAND ET LAMARTINE
DANS LA LITTÉRATURE ARMÉNIENNE

ԳՐԹԻՆ ԱՌԹԻԻ

Բանաստեղծ Փօլ Սուշոն, վերադառնալով Փարիզի «Վիկթոր Հիւկօ Մուսէոն»ին, հետեւեալ նամակը ուղղած է Պ. Զօպանեանին:—

Սիրելի բարեկամս,

Ձեր այս գիրքով ամենաքանկագին վկայութիւն մը կը բերէք Վիկթոր Հիւկոյի նաուգայրմանը, քանի որ լոյսի հայրենիքը, որ ձեր հայրենիքն է, անոր կ'ընծայէ այդպիսի գո-

վեստներ: Այդ գեղեցիկ հաւաքածուն պիտի տեղաւորեմ մեր մատենադարանին մէջ, ուր ան պիտի հաստատէ նաեւ քէ Մուսաները Արշակ Զօպանեան բանաստեղծը Ֆրանսայի մէջ դրին՝ որպէս զի «հնչուն արձագանգն» ըլլայ մեր մեծագոյն փառքերուն, Միսքրալին եւ Վիկթոր Հիւկոյին:

Ձեր վաղեմի բարեկամը Փօլ ՍՈՒՇՈՆ

Վ Ր Ի Պ Ա Կ

Արմենակ Սպարգեանի Անտիտի ներկայ թիւով հրատարակուած «Յիշատակներ Կ. Պոլսէն» յօդուածին մէջ, հետեւեալ քանի մը տրպադրական վրիպակները սպրդած են, էջ 34, ա. սիւնակ, տող 41, զգացուած ուղղել՝ զգացած. էջ 34, բ. սիւնակ, տող 26, իր խորհրդապահարար հնազորդած, ուղղել՝ իրեն խորհրդապահարար հնազորդուած: էջ 37, ա. սիւնակ,

տող 8 եւ 9, պալատին մէջ սենեկապաններուն մօտ, Սեֆէր Էֆէնտին էր որ Արտաֆին Գործոց նաւ տող մը ինկած է՝ այս երկու տողերուն միջեւ, ուղղել՝ Պալատին մէջ, սենեկապաններուն մօտ, միակ Հայը որուն կը հաճոյիպէի երբեմն, Սեֆէր Էֆէնտին էր, որ Արտաֆին Գործոց նաւ էջ 39, ա. սիւնակ, տող 12, քարոզմանը, ուղղել՝ քարոզմանը: